է. նյութերը [illegible] և թուղթը [illegible] է։ Մանավանդ [illegible] է «[illegible] են [illegible] մարդիկ» փոխադրությունը, որը այնպես [illegible] է, որ չի կարելի կարծել անգամ, որ դա փոխադրություն է. կամ նյութը առնված է ռուսական գրքից։ Այս բոլորից հետո մենք սրտով ցանկանում ենք, որ այս օգտակար ընկերությունը հարատևե և այսպիսով նա կարողանա զարկ տալ ընթերցանության և մի քանի գիրք ձգել ազգային գրականության աղքատ մատենադարանը[8]։

«Դրական ընկերության» ժողովներում Հ. Հովհաննիսյանը հանդես էր գալիս գրական-հասարակական, կուլտուր-լուսավորական հարցերին նվիրված զեկուցումներով, որոնցից որոշ նյութեր պահպանվել են նրա արխիվում։ Այդ հանդիպումների թեմաներից մեկը հայ գյուղացու [illegible], հարստահարված վիճակի հարցն էր։ [illegible] [illegible] հայրենասիրական [illegible] էին [illegible] վիճակ, [illegible] [illegible] [illegible]։

[illegible] հասարակական աշխատանքներով ծանրաբեռնված լինելով, Հ. Հովհաննիսյանը [illegible] էր [illegible] և հանդիպում [illegible] [illegible] մեկը։ [illegible] [illegible], [illegible] հանդիսանում է գրող նա իր [illegible] մեծ մասը, բայց չի [illegible]։ [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] Հովհ. Հովհաննիսյանի կյանքում։ 1887 թ. «Դրական ընկերության» [illegible] [illegible] հրատարակվում է Հովհ. Հովհաննիսյանի [illegible] ժողովածուն, որը փառք և [illegible] [illegible] [illegible] [illegible] [illegible] Հ. Հովհաննիսյանի [illegible] գործունեությունը [illegible] [illegible] [illegible] [illegible] էջերից է։

Ա. ԱՎԵՏԻՍՅԱՆ

[8] ՀՍՍՌ ԳԱ գրականության և արվեստի թանգարան, Միքաել Բերբերյանի ֆ., № 7։

ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆ ՄԻՋՆԱԴԱՐՅԱՆ ՄԻ ՏՈՒՐՔԻ ՄԱՍԻՆ

Հայագիտությունը հատուկ ուշադրություն է դարձրել միջնադարյան Հայաստանի հարկային և տուրքային քաղաքականության հարցերին։ Այս առումով վաղուց ի վեր տարբեր առումներով դիտվել ու քննարկվել են, մասնավորապես, IX—XIV դարերում գոյություն ունեցած բազմաթիվ հարկերն իրենց տարատեսակներով[1]։

Հայաստանում լայն կիրառում գտած հարկերն ու տուրքերը հատկապես ծանրանում են մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանում, երբ օտար ամեն մի հարկահան կարող էր սահմանել հարկերի չափն ու ժամկետները, կողոպտելու տարբեր եղանակները։ Օտար բռնակալներից համարյա ետ չէին մնում հայ ֆեոդալները, վանքերը, որոնք իրենց հերթին կեղեքում էին աշխատավոր ժողովրդին։

Միջնադարյան Հայաստանի տնտեսական կյանքն ուսումնասիրելու համար վստահելի աղբյուր են բազմաթիվ վայրերում սփռված վիմագիր արձանագրությունները[2]։

Դրանց մեջ, ի թիվս այլոց, հիշատակվում են այդ ժամանակաշրջանում գոյություն ունեցող բազմաթիվ հարկերն ու տուրքատեսակները։ Թվով մի քանի տասնյակի հասնող հարկերի ու տուրքերի էությունը հիմնականում պարզաբանված է հայագիտական աշխատություններում։ Հետևաբար, մեր խնդիրը չէ վերստին անդրադառնալ դրանց։ Սույն հոդվածի նպատակն է վերծանել «սահկանէ» կոչված տուրքը, որը գոյություն է ունեցել միջնադարյան Հայաստանում։

«Սահկանէ» իբրև տուրքի առանձին տեսակ[3] հայագետները առաջին անգամ գիտել են Բջնիի 1325 թ. գրված մի արձանագրության մեջ, ուր հիշատակվում է, թե Աթաբակ Իվանեի

[1] Հ. Մանանդյան, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Գ, գլ. 16, Երևան, 1952, էջ 271—291, Ս. Պողոսյան, Գյուղացիների ճորտացումը և գյուղացիական շարժումները Հայաստանում IX—XIII դարերում, Երևան, 1956, էջ 185—244, Ս. Հակոբյան, Հայ գյուղացիության պատմություն, հատ. 1, գլ. 8, Երևան, 1957, էջ 302—468, Հ. Բունմանյան, Հայաստանի տնտեսական զարգացման պատմություն, Երևան, 1960, էջ 126—152։

[2] ՀՍՍՌ ԳԱ Հնագիտության և ազգագրության ինստիտուտը հրատարակել է «Դիվան հայ վիմագրության» պրակների շարքը։ Արդեն լույս է տեսել II պրակը։

[3] Այս մասին սոսկ հիշատակում է Ալիշանը («Շիրակ», 92), որից և վերցրել է ակադ. Հ. Մանանդյանը (տե՛ս «Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության», հատ. Գ, էջ 283)։

ծոռը՝ Զաքարեն, Սահիպ Դիվանի և Խոշաքի որդին, ի թիվս մի քանի հարկերի, վերացրել է նաև «զՄահկանէն» (լուսանկար 1)։ Ահա այդ արձանագրությունը.

«Թ. ՉՀԴ—Յուսով անմահին Ալ ես Զաքարէ որդի Սահիպ Դիվանին եւ պարոն Խոշաքին թոռն Աթաբակ Ավագին որդոյ Աթաբակ Իվանէի վասն մեր յերկար կենդանութեան եւ փրրկութեան յոգոյ իմոյ/իվեր կալայ որ ի Բջնի այլ մարդոյ տիրութին չէյնի. եւ թողի զամէն հարկ զԱմիրայհակն/զՀարսանէհակ զԿովայհամարն զԿալայթագարն զՍայլինսպ/իտակ/ զՄահկանէն. ատարականն քան զզա/զմէն այլ իրք չտայ ազման չանեն, որ յայմհէտէ մինչեւ յաւիտեն հաստատուն կացէ արձանս իմ. էթէ որ/խափանել ջանայ հիմոց կամ յիմ զավակաց կամ յատարաց իմ մեղացն պարտական է առաջի Այ»[4]։

Այստեղ նշված հարկերը կամ տուրքերը ստացել են իրենց բացատրությունը, բացի «Մահկանէ» կոչվածից, որի էությունը գիտնականները չեն բացահայտել։ Ակադեմիկոս Հրաչյա Աճառյանը «Արմատական բառարանում» այս առթիվ գրում է՝ «Մահկանայ. «Մի տեսակ տուրք», նորագյուտ բառ, որ մեկ անգամ գտնում եմ գործածված անթվական մի արձանագրության մեջ. Վիմ. տար. 226, հյց. զՄահկանէն ձեռվ»[5]։ Նույն կերպ է մեկնաբանել նաև ակադեմիկոս Ստ. Մալխասյանցը[6]։ Ակադեմիկոս Հ. Մանանդյանը, թվարկելով մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանի հարկերը, գրում է. «Մահկանէ—հիշատակված է Բջնիի անթվական մի արձանագրության մեջ»[7]։



Նկ. 1. Բջնի—արձանագրություն եկեղեցու հարավային պատի վրա

«Մահկանէն» մեզ հանդիպում է նաև Գառնիի Ս. Աստվածածին կամ Մաշտոց Հայրապետ անունը կրող եկեղեցու արևմտյան մուտքի ձախ պատին, 1315 թ. փորագրված արձանագրության մեջ, որտեղ հիշատակվում է, թե «Գառնո տամդատարքջ Հովհաննեսն ու Վանականը վերացրել են որոշ հարկեր, ընդ որում և «զՋաղացի մահկանան» (լուսանկար 2)։ Արձանագրությունը առաջին անգամ գրի է առել Սիսոեր և հրատարակել Մոսկվայում[8], սակայն այդ հրատարակությունը խիստ անբավարար է, իսկ «զՋաղացի մահկանան» բառերի ընթերցանությունը պարզապես բացակայում է։ Արձանագրության ճիշտ ընթերցանության և կարևորության վրա մեր ուշադրությունը հրավիրել է պրոֆ. Բ. Ն. Առաքելյանը Գառնիում 1962 թ. կատարվող պեղումների ժամանակ։ Նա մասնակի մի հարցի կապակցությամբ հրատարակել է այդ արձանագրության սկզբի մասը[9]։ Հարկ ենք համարում արձանագրությունը մեջբերել ամբողջությամբ.

[4] «Վիմական տարեգիր, ցուցակ ժողովածոյ արձանագրութեանց հայոց», կազմեաց Կ. Կոստանեանց, Ս. Պետերբուրգ, 1913, էջ 226—227։ Սույն արձանագրությունը զետեղված է «Յաւելուած, անթուական արձանագրութիւնք» մասում (№ 31)։ Տե՛ս նաև Ղ. Ա լ ի շ ա ն, Այրարատ. էջ 273։ Ի դեպ նշենք, որ «Վիմական տարեգրի» հեղինակը Բջնիի արձանագրությունը վերցնելով «Այրարատից», իբրև աղբյուր սխալմամբ նշել է «Շիրակը»։ Արձանագրությունը մեջ ենք բերում՝ վերացնելով նախորդ հրատարակությունների թերությունները։

[5] Հ ր. Ա ճ ա ռ յ ա ն, Արմատական բառարան, հատ. 4, էջ 760։

[6] Ս տ. Մ ա լ խ ա ս յ ա ն ց, Հայերէն բացատրական բառարան, հատ. 3, էջ 242, Երևան, 1944։

[7] Հ. Մ ա ն ա ն դ յ ա ն, Քննական տեսություն հայ ժողովրդի պատմության, հատ. Գ, Երևան, 1952, էջ 283։

[8] «Материалы по Кавказской археологии под редакцией Кучук Иоаннесова и Уваровой», том XIII, Москва, 1916, էջ 35։

[9] Բ. Ն. Ա ռ ա ք ե լ յ ա ն, Գ. Հ. Կ ա ր ա խ ա ն յ ա ն, Գառնի 3, 1949—1956 թթ. պեղումների արդյունքները (միջին դարեր), Երևան, 1962, էջ 46։

ՉԿԵ, ԹՎ.—(1315) Ճնարին Այ եւ Յովհաննէս որդի Տիրատրս եւ ես Վանականս որդի Յովանն|ի|սի Գառնս տամդ ստարբս|վառն մեր պարոնացն յերկար կենդանութեան|և մեր հոգոյս համար, մեր տանուտեր|աց Արանիի, Պարապետին—Ածարս|հոլատոին, Ասխատքանայ Ամենատ... Միքէլին, Ութին, Վարդին, Ալլիքս|ջանին, եւ այլ մեծ ու փոքր տանուտեր[աց]ն վերուցար զՄունդենց վանի—|զնատարակաց զգինս եւ զամեն|ման ցեղ վաճառի տամդա ու զՀաղ|ացի մանկանա, որ սուրբ Աստուածածնիս լուս|ացու լինի։ Եւ թէ որ ի Քրիստոնէից|կամ չայրագգեց, որ յայս կա|գալիս վերա լինի, ու զմեր առանդս խ|ափանել չանա, եւ զմեր հոգիս գրկ|ել, գրկեսցի նա յողորմութենէն Այ եւ յամենայն սրբոց յերկնաւ|որաց եւ յերկրաւորաց անէծս տոաւ եւ|յամեն ազգ նալաթ լիցի եւ ի մեծ|պարոնաց խռովութեան անդանիս։



Նկ. 2. Արձանագրություն Գառնիի Ս. Աստվածածին եկեղեցու արեւմտյան մուտքի ձախ սատին

Այս արձանագրությունը բավարար լույս է սփռում չվերծանված «մանկանէ» կամ «մանկանա» տերմինի վրա։ Քանի որ այն գրված է կապակցության մեջ՝ շրագայի հետ, ուրեմն, դա շրագայից պանձվող տուրք էր։ Տվյալ դեպքում այն պանձվում էր Գառնիի շրագայատերերիս (արձանագրության մեջ՝ Մունդենց վանքից)։ Տուրքը վերացնողները տամդատարներն (տարկահաններն) էին և այդ բանը արել էին «Վառն մեր պարոնաց յերկար կենդանութեան եւ մեր հոգոյս համար...»։ Մի այլ արձանագրությունից իմանում ենք, որ Գառնիի տերերը այդ ժամանակ Իշխանի արձանագրության մեջ հիշատակված Զաքարեն և իր մայր Խոշաբն էին[10]։ Դա նշանակում է, որ տուրքը վերացվել է պարոնների, ավյալ դեպքում՝ Զաքարյան ֆեոդալների համաձայնությամբ, որոնց օգտին այն պանձվում էր, բայց վերացնողներն անմիջական եղել են

[10] Նույն տեղում, էջ 45։

հարկահանները։ Ուրեմն նրանք, ժամանակի սովորության համաձայն, կապալով էին վերցրել Խանի բնակավայրից գանձվող հարկերը, ուստի և կարող էին իրենք էլ վերացնել որոշ հարկեր։

Այստեղից պարզ է դառնում, որ «մահկանան» եղել է մի տուրք, որը գանձվել է ջրաղացից՝ Փեղայի տերերի օգտին, քանի որ հարկահանները սոսկ կապալառուներ էին, որոնք նախօրոք վճարելով որոշ գումար՝ Փեղայի պարոններից ժամանակավորապես գնել էին տվյալ վայրից հարկերը հավաքելու իրավունքը։ Ջրաղացը իրոք հասութաբեր հաստատություն էր։ Մխիթար Գոշը նշում է, որ ջրաղացի տերերը ստանում էին աղունավարձ, որն «ըստ պայմանաց դանդաղանին, բայց փոփոխումն ի նուազութենէ հացի եւ ջրոյ եւ կամ յառաւելութենէն»[11]։

Ջրաղացի տերերը, ստանալով աղունավարձ, Փեղային վճարում էին տուրք, որը մեր արձանագրության մեջ կոչվում է «ջաղացի մահկանա», իսկ դրանից 86 տարի առաջ՝ 1231 թ. Շիրակավանում փորագրված մի արձանագրությունում ջրաղացի տուրքը անվանված է «խարաճ ջաղջացը», որը վերացրել էին Շիրակի տերերը՝ Զաքարյան իշխան Իվանեն և իր կին Խոշաքը[12]։ Ուրեմն, Դանիի և Բջնիի արձանագրություններից մոտ մեկ դար առաջ էլ այն գանձվում էր Զաքարյանների օգտին, որոնք տիրացել էին Հյուսիսային Հայաստանին և մոնղոլների օրոք էլ պահպանում էին իրենց տիրակալական իրավունքները։ Պրոֆ. Բ. Ն. Առաքելյանը ենթադրում է, որ ջրաղացի հարկի գանձումը պետք է սկսված լինի դեռևս IX—X դարերից, երբ ջրաղացները լայն տարածում ստացան։ Ըստ երևույթին, մոնղոլական տիրապետության ժամանակաշրջանում «ջաղջաց խարաճը» քաղաքացիական ճանաչում է ստանում «մահկանէ» անվան տակ[13]։

Մահկանէ ماهگانه mahgane բառը կազմված է պահլավերեն (միջին պարսկերեն) մահ ماه man լուսին, ամիս (հմմտ. ռուս. месяц) արմատից և գանե կամ կանե گانه gane (հմմտ. հայերեն -կան) ածանցից և արտահայտել է «ամսական վարձ» իմաստը։ Ժամանակակից պարսկերենում նույնպես նշանակում է «ամսական»[14]։ Կ. Պոլսում 1826 թ. հրատարակված «Պարսկերեն հայատառ բառարանում» մեջ հետաքրքրող տուրքի անունը նշված է երեք ձևով. ա) մահկանէ, բ) մահեանէ և գ) մահիյնէ։ Երեք դեպքերում էլ նշանակել է «ամսական»[15]։ Բառահոդվածի երկրորդ նշանակությունն է Թոշակ, որը կապվում է ամսավճար վարձատրության հետ։

Այսպիսով, վերը շարադրածից պարզվում է, որ մահկանեն (կամ մահկանան)[16] ջրաղացներից՝ իբրև հասութաբեր հաստատություններից, գանձվող ամսական տուրքն էր, որը վճարում էին ջրաղացների տերերը Փեղային։ Այդ տուրքը տարբեր անուններով գոյություն է ունեցել մի շարք դարերի ընթացքում։ Այլևայլ պատճառներով և նկատառումներով այդ տուրքը վերացվել է, բայց, իհարկե, ոչ բոլորից, այլ միայն առանձին ջրաղացատերերից։ Վիմական արձանագրություններից գիտենք, որ Դանիում կային բազմաթիվ ջրաղացներ, սակայն վերը բերված արձանագրության մեջ նշվում է, որ այդ տուրքից ազատվել է միայն Սունդենց վանքը, որպեսզի հոգա վանքի լուսավորության ծախսերը։ Մյուս դեպքերում ջրաղացի տուրքից ազատվել են Շիրակավանի և Բջնիի ջրաղացատերերը, բայց դա չի տարածվել Զաքարյանների բոլոր տիրույթների ջրաղացների վրա։

Վերջում հարկ ենք համարում նշել հետևյալը. քանի որ «մահկանէ» կամ «մահկանա» նշանակում է ամսական տուրք, ապա չի բացառվում, որ այդ անունով կարող էին կոչվել նաև այլ հասութաբեր հաստատություններից (օրինակ, ձիթհանքերից, բաղնիքներից և այլն) ամիս առ ամիս գանձվող հարկերն ու տուրքերը, սակայն մեզ հետաքրքրող տերմինը առայժմ հայտնի է «ջաղացի մահկանա» կապակցությամբ։

Գ. ԳՐԻԳՈՐՅԱՆ

11 «Մխիթարայ Գօշի Դատաստանագիրք հայոց», Վաղարշապատ, 1880, II մաս, հոդվ. ՃԻԷ, էջ 439—440։

12 Ալիշան, Շիրակ, էջ 10, Վենետիկ, 1881։

13 Այդ մասին պրոֆ. Բ. Ն. Առաքելյանի դիտողություններին ծանոթացել ենք նրա «Քաղաքները և արհեստները Հայաստանում IX—XIII դարերում» աշխատության II հատորի ձեռագրից, որը հրատարակության է հանձնված։

14 Նեֆիսի, Պարսկերեն բացատրական բառարան, հատ. 5։ Մոհամմեդ Հուսեյն Բուրհան Թաբրիզի, Պարսկերեն բացատրական բառարան, հատ. 2, Թեհրան, 1938, էջ 1306։

15 «Պարսկերեն բառարան», Կ. Պոլիս, 1826, էջ 290։

16 Դանիի արձանագրության մեջ նշված է «մահկանա» ձևով։